



“ԹՈՂ ՏՈՒԻՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍԻ ԳԱՆ:” ՂՈՒԿ. ԺԸ. 16:

ՀԱՏՈՐ ԻԴ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՆՈՅԵՄԲԵՐ 1, 1895

ԹԻԻ 11



ՓՈՄՊՈՒԴ

ՓԱՄՊՈՒԳ

Նախորդ երեսի պատկերին մէջ զուարթ գէմբով փոքրիկ աղջիկը կոչենք Ալին, և իր գեղեցիկ խոշոր կատուն՝ փամպուգը: Ի՞նչ կակուղ և քնքուշ է անոր մորթը: Տարակոյս չունիմ թէ մեր բոլոր ընթերցողները կ'ընդունին որ աղջիկն այնուամենայն էլ սիրուն կենդանիներուն ամենէն հաճելին է: Կը վաղէ կը դիմաւորէ քեզ երբ տուն կը մտնես, և ետեւէդ կու գայ բարձր խորդալու ձայնով ու կը քսուբախ բողբոխ քրքրէ, իբր թէ անկարող է իր դէպ ի քեզ ունեցած սէրը յայտնելու:

Կատուններն ալ մեծ կարողութիւն ունին իրենց բնակարանին ճամբան գտնելու, և հասկցուած է թէ նորէն ետ դարձած են շատ հեռին զրկուելունէն ետքը: Անգամ մը կատու մը կառքի մը ներսը՝ դոց վանդակի մէջ դըրուելով զրկուեցաւ քառասուն յիսուն մղոն հեռու գտնուող բարեկամներու: Եւ սակայն թէպէտ կենդանին չէր կրնար գիտցած ըլլալ թէ ի՞նչ ճամբով տարուեցաւ, երկու ամիս ետքը նորէն իր առջի տեղը դարձաւ, բոլոր ճամբան իր հետ տանելով երկու ձաղերն ալ:

Բայց կատունները իրենց երթալու ճամբաները գտնելու ճարտարութենէն զատ, ուրիշ հետաքրքրաշարժ յատկութիւններ ալ ունին:

Փամպուգ իմաստուն և զուարթ կերպարանք մը ունի, իբր թէ խօսիլ կ'ուզէ: Քանի մը բաներ հարցնենք իրեն:

«Փիսիկ, ի՞նչ են բերնիդ երկու կողմերը գտնուող երկու պելսերը: Կ'երևի թէ շատ կը պանծաս ատոնց համար, բայց անշուշտ ատոնք լոկ զարդ չեն կրնար ըլլալ:» Եթէ փամպուգ կարող ըլլար խօսելու, պիտի պատասխանէր. «Քննեցած ժամանակս՝ անգամ մը դպէք այդ մաղերուն ծայրին միայն, և ահա անմիջապէս կը զգամ և կ'արթննամ: Անոնք ինձի մեծ ծառայութիւն կ'ընեն երբ կը սողոսկիմ մութ և նեղ անցքերու մէջէ:»

«Ի՞նչ կ'ըսես աչքերուդ համար, փիսիկ: Շան աչքերուն չեն նմանիր և ոչ մարդու աչքերուն:»

«Ոչ, եթէ աչքերուս նայիք կէսօրին, անոնց բլբլբը շատ նեղ կ'երևին, իրիկունը շատ լայնցած կ'երևին և կէս գիշերին այնքան բոլորակ կ'ըլլան որքան շան աչքերունը, միայն թէ շատ մը աւելի խոշոր՝ բազդատելով աչքերուս հետ: Ուստի կարող եմ որ և ինչէ մութ անցքի մը բոլոր լոյսը աչքե-

րուս մէջ հաւքել, այնպէս որ կրնամ ատենել և բռնել որս:»

«Ճանկերս ալ զարմանալի կերպով շինուած են, այնպէս որ կրնամ լռիկ մնալի սողոսկիլ և ցատկել որսիս վրայ: Այն ատեն իմ թաւիչի նման թաթերուս բոլորաբար սուր ճիրաններ կը ցցուին, որոցմով կը բռնեմ որս:»

Եւ այսպէս մինչ մենք կը վայելենք փիսիկին բարեկամութիւնը, շատ մը շահեկան դասեր ալ կը սորվինք անկէ:

բազ սլացումով ահագին հեռաւորութիւններ կը կտրեն, թէպէտ ջուրին երեսին վրայ հաղիւ թէ քանի մը ոտքէն աւելի բարձրէն կը թռչին: Յամաքի վրայ մեծ դժուարութիւնով կը քալեն. և իրաւ որ քիչ անգամ կը մտենան ծովեզրին բայց միայն իրենց բոյները դնելու համար զառ ի վեր ժայռերու կամ անոնց վերի սուր ծայրերուն վրայ, ուր խոշոր ճերմակ հա-



ՊԵՏՐԱՆԱԻԲ

ՓՈԹՈՐԻԿ ՍԻՐՈՂ ՊԵՏՐԱՆԱԻԲԸ

Մեզմէ ո՞վ ատեսած է ջուրին վրայ քալող թռչուններ: Սուրբ Պետրոսի՝ Գեննեսարեթի ծովակին փոթորկայոյց ջուրերուն վրայ քալելու հրաշքին ակնարկուելով, պատկերին մէջի թռչունները քանի մը Եւրոպական լեզուներու մէջ կը կոչուին «փոթորիկ Պետրոս», և Հայերէն՝ Պետրոսահաւ: Այսպէս կը կոչուին, վասն զի ծովուն երեսին այնչափ մօտէն կը թռչին, որ այնպէս կ'երևի թէ անոր վրայ կը քալեն: Իրենց զօրաւոր և ա-

կիթ մը կ'ածեն:

Այս թռչունները շատ կը սիրեն փոթորկայոյց օդը: Կը սահին ամենէն ալէկոծեալ ջուրին վրայ, և կը թռի թէ երբեք այնչափ երջանիկ չեն ըլլար որչափ այնպիսի ժամանակներ երբ վեր վար կ'ելլեն կ'իջնեն ծովու վերջափութներու լեռներէն: Երբ Պետրոսահաւերը կը յոգնին, իրենց գլուխները թեւերնուն տակը խօթելով կը քնանան ջուրերուն վրայ, իրենքդիրենք հովին քմահաճոյքին յանձնելով:

Շատ գեղեցիկ են անոնք, և շատ


կարևոր են ցրտային ծովերուն բնակիչներուն, որոնք անոնց փետուրները անկողնի կը դործածեն և միտը՝ կերակուրի: Անոնց մարմիններէն հանուած իւրն ալ կ'ուտուի: Շատ անգամ կզգեցինները այս Պետրահաւերէն կանթեղներ կը շինեն, պատրոյգ մը անցընելով անոնց մարմիններուն մէջ երբ հաղիւ թէ կը սպաննուին: Պատրոյգը կը վառեն թռչունին կտուցին քով:

Այս թռչուններուն շատ տեսակները կան Միջերկրական ծովուն և Վոսփորի վրայ: Անոնք որոց սաւառնիլը կը տեսնենք մեր գեղեցիկ կապոյտ ջուրերուն մօտերը, իրենց բոյները

արդեօք անոնցմէ քանին, երբ կ'ըսեն այս գեղեցիկ խօսքը, «Աստուած սէր է» կը խորհին թէ մենք ամէնքս ալ Աստուծոյ զաւակներն ենք, և եթէ Աստուծոյ զաւակներն ենք, պէտք է որ անոր նման ըլլանք, շատ սիրող և քաղցր:

Թերեւս երբեմն լած էք որ ձեր մայրիկին այցելութեան եկող տիկիններ կ'ըսեն, «Գիտե՞մ որ ասիկա քու տղադ է, վասն զի շատ կը նմանի իր հօրը:»

Եթէ կ'ուզենք որ մարդիկ գիտնան թէ մենք Աստուծոյ զաւակներն ենք, պէտք է որ անոր նման ըլլանք քաղցր, մարդասէր և սիրող:



կուած էր նա և մարդու թող չէր տրուել երթալ անոր քով» կ'ըսէ Տրիֆյուրը, «որ Ռենսիփորոս շատ փնտռելէ ետքը կարող եղաւ գտնել զանիկա (Բ Տիմ. Ա. 16, 17), և այնպէս սաստիկ էր ցուրտը իր բանտին մէջ, որ շատ պէտք կը զգար և կը փափաքէր որ իր վերարկուն բերուէր զոր թողած էր Տրովադա որուն կլիման աւելի տաք էր (Բ Տիմ. Գ. 13): Իր ընկերներէն շատը հեռացած էին իրմէ: Դեմաս թողած էր զինք, վասն զի իր անձնական աշխարհային գործերուն գացած էր: Կրիսկէս և Տիտոս գացած էին ստիպողական գործերու համար, մին թեսագոնիկէ և մին Դաղմատիա: Տիւքիկոս զրկուած էր Եփեսոս: Միայն միշտ հաւատարիմ և փափկասիրտ Ղուկաս իր հետ էր (Բ Տիմ. Գ. 10, 11): Տիմոթէոս փոքր Ասիա կը գըտնուէր, և Աստուծոյ այս սիրելի ծառային սիրտը անհանգիստ էր անոր համար, այնպէս որ անոր գրեց այս սրտաշարժ թուղթը, ստիպելով զնա որչափ կարելի է՝ շուտով գալ իրեն: Եւ սակայն մինչև անգամ այս խընդիրքը ընելէն ետեւ ալ, կը տարակուսէր թէ իր սիրելի հոգևոր որդին պիտի համներ արդեօք քաղաք զինք տեսնելու համար:»

Պողոս ալ ուրիշ բանտարկեալներու պէս կը դողդա՞ր և կը սոսկա՞ր սպասելով զինուորներուն ոտնաձայնը լսել որոնք բանտը կու գային վերջին անգամ բանալու համար անոր դուռը: Կարգանք այն յաղթական խօսքերը որոնք կը գրէ նոյն սիրելի Տիմոթէոսին. «Դիս արդէն զո՞ր լալու նուիրուած եմ, ու իմ մեկնելուս ատենը հասեր է: Բարի պատերազմը պատերազմեցայ, ընթացքը կատարեցի, հաւատքը պահեցի: Ասկէ ետեւ կայ կը մնայ ինձի արդարութեան պասկը, որ Տէրը՝ արդար Դատարար պիտի հատուցանէ ինձի ան օրը:» «Շնորհքը ձեզի հետ: Ամէն:»

ԳԵՈՐԳԻ ԲԱՐՈՉՈՒԹԻՒՆԸ
«Երբ մեծնամ, քարոզիչ պիտի ըլլամ», ըսաւ Գեորգ օր մը: «Ի՞նչ է քարոզիչը», հարցուց մեծ մայրը: Գեորգ զարմանքով նայեցաւ, յետոյ ըսաւ, «Չե՞ս դիտեր թէ ինչ է քարոզիչը: Քարոզիչը այն է՝ որ կ'ըսէ թէ ի՞նչ է Աստուածաշունչին խօսքերուն միտքը: Կ'ըսէ, «Երբորդ՝ եղբայրներ»:



ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ ՀՈՍԻ ԲԱՆՏԻՆ ՄԷՋ

կը շինեն Սև ծովուն եզերքի Ժայռերուն սրածայր գագաթներուն վրայ: Մեղմէ կը մեկնին դարնան առաջին տաք օրերուն, և չեն վերադառնար մինչև որ ձմեռուան անձրևները չսկսին նոյեմբերի մէջ. վասն զի այս թուխ փետուրներ ունեցող թռչունները շատ կը սիրեն այլևոր ծովը: Զարմանալի չէ որ նաւորդները չար ողիներ և փոթորիկներու կարապետներ կը համարին զանոնք: Անոնց փոթորիկը սիրելուն պատճառը իրենց փետուրներուն խտութիւնն է որ ջուր չեն ընդունիր և զիրենք ցուրտէն կը պաշտպանեն:

«ԱՍՏՈՒԱԾ՝ ՍԷՐ Է՛»

Կիրակնօրեայ դպրոց գացող ամէն փոքրիկ տղայ դիտէ այս համարը, բայց

ԾԵՐՈՒՆԻ ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Պողոս առաքեալին վերջին օրերուն պատմութիւնը անստուգութիւններով լեցուն է, բայց Աստուածաշունչն ուսանողները կը կարծեն թէ անոր բանտարկութիւնը որուն վրայով կը կարգանք Գործք Առաքելոց գիրքին ԻԸ գլխուն վերջին մասին մէջ, վերջացաւ անոր արձակուելովը, և թէ յետոյ երեք կամ չորս տարի անցուց նա նորէն այցելելով իր հիմնած եկեղեցիներուն և Աւետարանը նոր տեղեր տանելով: Բայց պատճառով մը նորէն ձերբակալուեցաւ Հռոմի մէջ, և այս անգամ՝ իրեն վարձքով բռնած տանը արտունութիւններէն մէկը չունէր, երբ բարեկամները և աշակերտները կ'երթալին և կու գային ազատօրէն:

«Իրաւ որ այնպէս խտիւ բանտար-

Եւ ամէն մարդ մտիկ կ'ընէ անոր : Աղէկ բան է երբ մարդիկ մտիկ կ'ընեն քեզի :

Մեծ մայրը ժպտեցաւ : «Կարծեմ հիմա բաւական մեծցած ես քարոզելու համար :» ըսաւ : «Իրան, մեծ մայր», ըսաւ փոքրիկ աղան փափաքով : «Այո, իրաւ», պատասխանեց մեծ մայրը : «Կը վախնամ թէ չեմ», ըսաւ Գէորդ քանի մը վայրկեան մտածելէ ետքը : «Եթէ ոչ քարոզել կը գիտնայի, բայց չեմ գիտեր :

Քարոզիչը ինչ կ'ընէ ամենէն առաջ», հարցուց մեծ մայրը : «Բնաբան մը կ'առնէ և ետքը կը բացատրէ զայն : Բայց ես չեմ կրնար ընել առիկա :

«Այո, կրնաս», ըսաւ մեծ մայրը : «Ահա քեզի բացատրելու աղուոր բնաբան մը : Իրարու հետ քաղցր եղիք :» «Բէ՛հ, ատոր մէջ բացատրելու բան չկայ», ըսաւ Գէորդ : «Գուք պէտք է որ քաղցր ըլլաք ամենուն, և այս է բոլորը որ կայ այդ խօսքին մէջ :

«Աղուոր բնաբան մը ահա իմ փոքրիկ քարոզիչիս առաջին քարոզին համար : Կ'ուզեմ որ քարոզէ ատոր վրայ շարաթ մը :» «Շարաթ մը քարոզէ : Չէ, մեծ մայր, ես չեմ կրնար :» «Չե՛ս կրնար շարաթ մը քաղցր ըլլալ քեզի պատահող ամէն մարդու :

Գէորդ վայրկեան մը մտածութեան մէջ ընկղմելէ ետեւ «Այդ քարոզե՛լ է», հարցուց :


«Այո, և շատ ընտիր տեսակէ քարոզութիւն : Աղէկ քարոզիչ մը պէտք է այդ կերպով քարոզէ, եթէ ոչ ժողովուրդը մտիկ չընէր բեմէն խօսուածներուն :

«Բէ՛հ», ըսաւ Գէորդ հառաչելով, «կարծեմ կրնամ ջանալ, բայց ես այդ տեսակ քարոզութեան վրայ չեմ խորհած :

«Գուն պէտք է որ ամէն մարդու ցուցնես միշտ թէ ինչ կը նշանակէ Սուրբ Գիրքին այդ համարը», ըսաւ մեծ մայրը : «Կարծապետին քաղցր եղած չեմ ըլլար եթէ չընծ հանեմ դպրոցին մէջ», ըսաւ Գէորդ հետեւեալ օրը, և չընծ մը անդամ չհանեց : «Սպասուհիին քաղցր եղած չեմ ըլլար եթէ ճամբուն վրայ խաղամ և սպասոյնեմ զնա ճաշիս համար», և դպրոցէն տուն գնաց աճապարելով : «Մայրիկին քաղցր եղած չեմ ըլլար եթէ անոր հրամանները չուտով չեմ կատարեր», ըսաւ, և առաջ արագ ըրաւ ինչ որ նա պատուիրեց իրեն :

Ամէն օր և ամբողջ օրուան մէջ կը մտածէր թէ ինչ է քաղցր ըլլալ, և կ'աշխատէր այնպէս ըլլալ :

Շարթուն վերջը եկաւ : «Քարոզելը կը սիրե՛ս», հարցուց մեծ մայրը : «Այո, կը սիրեմ. բայց, մեծ մայր, կարծեմ ամէն մարդ կը քարոզէ այդ բնաբանին վրայ, վասնզի ամէն մարդ քաղցր եղաւ ինծի այս շարթու :



ՄԱՐԴԸ ԵՒ ԱՂՈՒԵԱԸ

Աղուէս մը որտորդներէն փախչելու համար շնչատապաւ ըլլալու չափ վազելէն ետքը աղաչեց մարդու մը որ իրեն պահուրտելու տեղ մը ցուցնէ : Մարդը իր խրճիթը ցուցուց անոր, և ըսաւ որ պահուրտի իր անկողինն ներքեւ : Յետոյ աղուէսին խոստացաւ մէկու մը չըսել իր տեղը : Շուտով եկան որտորդները և հարցուցին մարդուն թէ ո՛ւր է աղուէսը : Մարդը թօթուեց զուլիսը իրբեւ նշան չգիտնալուն, բայց մատովը ցուցուց անկողինին ներքեւ որ պահուած էր աղուէսը : Աղուէսը տեսաւ մարդուն ըրածը, և յանկարծ պատուհանէ մը դուրս խրճիթին միւս կողմը ցատկելով փախաւ :

Քանի մը օր ետքը մարդը աղուէսին պատահեցաւ և ըսաւ, «Ինչո՞ւ համար դողիք խրճիթէս առանց ինձմէ շնորհակալ ըլլալու քու կեանքդ ազատելու համար :» «Վասն զի ճշմարտութիւնը չխօսեցար», ըսաւ աղուէսը :

«Բայց ես քու տեղը չըսի որտորդներուն», ըսաւ մարդը : «Ոչ», ըսաւ աղուէսը, «դուն սուտ չխօսեցար բերնովդ, բայց սուտ խօսեցար մատովդ, և այդ նոյնչափ գէշ բան է :

Խուլ և համր անձինք ուրիշ կերպով չեն կրնար սուտ խօսիլ :

ՄԱՆԻ ԿՏՈՐՆԵՐԸ

Քանի մը տարի առաջ Իտալիոյ մէջ կը բնակէր և կը գործէր մեծ արուեստագէտ մը : Զարմանալի հանճարի տէր մարդ էր նա : Ապակիի և քարի կտորներով դեղարուեստի դարմանաւրբանչ գործեր, միւսիոններ (ժողայէֆ), կը շինէր, որ հազարաւոր ոսկիներ կ'արժէին :

Իր խանութին մէջ կը գտնուէր աղքատիկ փոքր աղայ մը որուն գործն էր մաքրել տախտակամածը և շիտակել սենեակը ցերեկուան գործերուն լիննալէն ետքը : Հանդարտաբարոյ աղեկ մըն էր և միշտ աղէկ կը կատարէր իր գործը : Այս էր արուեստագէտին բոլոր գիտցածը աղուն վրայ :

Օր մը աղան իր տիրոջը եկաւ և երկչատութեամբ հարցուց անոր, «Ինձի հրաման կուտամ որ առնեմ տախտակամածին վրայ նետած ապակիի կտորներդ :

«Այո», ըսաւ արուեստագէտը : «Այն կտորները բանի մը չեն դար, ինչ կ'ուզես ըրէ զանոնք :

Անկէ ետեւ աղան ամէն օր կ'ուսումնասիրէր տախտակամածին վրայ գրանուող կտարած կտորները, անոնցմէ մէկ քանին այս կողմը կը դնէր և մէկ քանին այն կողմը կը նետէր : Հաւատա-

րիւմ փոքրիկ ծառայ մըն էր այս աղան, և այսպէս տարիները կ'անցնէին և նա կը շարունակէր մնալ արուեստագէտին խանութին մէջ :

Օր մը տէրը խանութին քիչ գործածուող մէկ սենեակը մտաւ, և երբ չորս կողմը կը նայէր, աչքին դպաւ բանուած կտոր մը որ դուռուցութեամբ ծածկուած էր կարասիներուն ետեւ : Լոյսին բռնեց զայն, և զարմանքով տեսաւ որ դեղարուեստի ընտիր գործ մըն է լիննալու մօտ : Վրան կը նայէր լսին հիացմամբ :

«Ո՞ր մեծ արուեստագէտը իր գործը ծածկած պահած է իմ ուսումնասենեակիս մէջ», մտածեց :

Նոյն վայրկեանին փոքրիկ ծառան դռնէն ներս մտաւ : Կեցաւ երբ հոն գտաւ իր տէրը, և երբ գործը անոր ձեռքը տեսաւ, շատ կարմրեցաւ :

«Ի՞նչ է այս», ըսաւ արուեստագէտը : «Բսէ ինձի, որ մեծ արուեստագէտը իր դուրս գործոցը ծածկեր է հոս :» «Ո՛հ, տէր իմ», կակաղեց ապշած տղան, «Իմ խեղճ գործս է այդ : Կը յիշես որ ըսիր թէ կրնամ առնել նետած կտորներդ :

Տղան, որ արուեստագէտի հանճարունէր, հաւաքած էր այն կտորուանքները և համբերութեամբ, փափաքով անոնցմով շինած էր դեղարուեստի հրաշակերտ մը :

Ասկէ բան մը կը հասկնա՞ք, ով փոքրիկ աղար և աղջիկներ : Ժողովեցէք ժամանակի և պատահութեան կրատորանքները որ ձեր չորս կողմն են, և համբերութիւնով յօրինեցէք ձեր կեանքին միւսիոնը — գլուխ գործոց մը Աստուծոյ շնորհքով :

ՊԱՏԱՍԻԱՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ՀԱՆՆԵՆՈՒԿԻՆ

Բ
Ձ Ե
Ո Բ Թ
Բ Ո Ո Ս
Ե Ի Ի Լ Ա
Ե Ս Ե Բ Ո Ն
Ս Ա Տ Ի Մ
Ե Ղ Ի Ա
Ս Է Բ
Ի Մ
Ա

Լուծեցին, Սֆիա, — Աստուածատուր Մկրտաչեան : Հիւանի Մանուկ, — Երթեր Մ. Գալուստեան :

Ամերիկայի Միւսիոնարի խանութիւնէն Արածնատէ՛ր Ս. ԳԱՐՄԱՆԻ
Տնօրէն — Խմբագրէ՛ր Ս. ԳԱՐՄԱՆԻ
Ֆինանսները Եղբայր Ս. ԳԱՐՄԱՆԻ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼԻՍ
Ի ՏԳՈՐԱՆԻ Ա. ԵՄԿՈՐ. ԳՕՍԱՆԱՆ